ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅԱՂՈՒԲԻ ԷԲՐԱՀԻՄ

Իլամցիների կենցաղը, ընտանեկան ծիսակարգը և տոները

Է. 00. 04 “Ազգագրություն” մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЯГУБИ ЭБРАХИМ

Быт, семейная ритуальная обрядность и праздники иламцев.

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07. 00. 04 “Этнография”

ЕРЕВАН -2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոց. Վ. Ա. Առաքելովա
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., պրոֆ. Ռ. Ա. Նահապետյան
պ. գ. թ. Թ. Ի. Ամրյան
Առաջատար կազմակերպություն՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. փետրվարի 13-ին, ժամը 14.00 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտություն և ազգագրություն մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունվարի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете Института Археологии и этнографии НАН РА.
Научный руководитель: к. и. н., доц. В. А. Аракелова
Официальные оппоненты: д. и. н., проф. Р. А. Наапетян
к. и. н. Т. И. Амрян

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарапатской битвы, национальный музей этнографии армян и истории освободительной борьбы.
Защита состится 13-ого февраля 2018г. В 14.00 часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца 15)
С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА.
Автореферат разослан 11 января 2018г.
Ученый секретарь специализированного совета
Кандидат исторических наук У. А. Мелконян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Իրանական բարձրավանդակը կարևոր քաղաքակրթական արեալ է, որի զարգացումը պայմանավորել և պայմանավորում է լեզուների ու մշակույթների բազմազանությունը:

Իլամը (Փոշտեքուհ), իր հերթին Իրանի ազգագրորեն հետաքրքիր տարածքներից է: Իլամը, լայն առումով՝ զագրոսյան արեալը հետաքրքիր են երեք խմբի. նստակյաց-երկրագործների, ուրբանիստ-քաղաքաբնակների ու քոչվոր անասնապահների փոխհարաբերությունների ուսումնասիրության տեսանկյունից: Տարածաշրջանի տնտեսությունը բնութագրելու համար կիրառվում է 1962թ. հայտնի հետազոտող Լաթիմորի կողմից առաջարկված “ներփակված քոչվորություն” տերմինը, ցույց տալու համար այն տարբերությունները, որ գոյություն ունեն Արևմտյան Ասիայի և եվրասիական տափաստանների քոչվորների միջև[1]: Իլամի նկարագիրը պայմանավորել է նաև քաղաքական պատմությունը: Լեռնային դիրքը, դժվարամատչելիությունը բերել են նրան, որ Իլամը լուր աթաբեկների և վալիների կառավարման ավելի քան յոթ դար տևած շրջանում պահպանել է իր կիսանկախ դրությունը: Այս վիճակն ազգագրագետին հնարավորություն է տալիս աղբյուրների ու ազգագրական նյութի համադրման միջոցով դիտարկել Իլամում առօրյա կյանքի, կենսակերպի, արժեքների, միջանձնային հարաբերությունների, տոների, սգո արարողությունների, հարսանիքների, ծննդյան, լեզվական նկարագրի վերաբերյալ բազմաթիվ հարցեր:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է իլամցիների[2] տնտեսական համալիրների, ընտանեկան կենցաղի, տոների ու ծեսերի ազգագրական ուսումնասիրությունը, դրանցում լոկալ՝ իլամականը, ինչպես նաև համաիրանականը բացահայտելու, էթնիկ և մշակութային համալիրների վրա պատմական զարգացման տարբեր փուլերում քաղաքական գործընթացների ու զարգացումների ազդեցությունները դիտարկելու նպատակով: Կարևորել ենք հատկապես լուր աթաբեկների և Փոշթեքուհի վալիների կառավարման շրջանի, ինչպես նաև վերջին երկու հարյուրամյակի զարգացումները:

Ատենախոսությունն ընդգրկում է Դաջարներից (1795թ.) մինչև Փեհլևիների դինաստիայի հաստատումը (1925թ.) ընկած ժամանակը: Սակայն, հատկապես ցեղային կառույցի առանձնահատկությունները, ընտանեկան ու ներընտանեկան հարաբերությունների զարգացումներն ուսումնասիրելիս անդրադարձեր են արվել և ավելի վաղ և ուշ շրջաններին:

Ատենախոսության նպատակից ելնելով, ձևակերպվել է 4 խնդիր:

Առաջին խնդիրը Իլամ (Փոշթեքուհ) նահանգի աշխարհագրական, պատմական, էթնոլեզվական բնութագիրը ներկայացնելն է:

---

[1]O. Lattimore, Studies in frontier history. Oxford: Oxford University Press, 1962.

[2] “Իլամցի” հասկացությունը գործածվում է ոչ թե էթնիկ հանրության, այլ կոնկրետ նահանգի բնակիչ իմաստով: Ատենախոսության համապատասխան բաժիններում ցույց է տրվում, որ Իլամը եղել է բազմէթնիկ: Այդ իրողությունը, սակայն, չի խանգարել, որ տարածքում ձևավորվեն մշակութային ընդհանրություններ, հատկապես որ ավանդաբար Իլամը համարվել է ավելի լայն պատմազգագրական արեալի՝ Լուրիստանի մի մասը:

Երկրորդ խնդիրը, որը բավականին բարդ է, վերաբերում է Իլամի ցեղային միությունների կառուցվածքն ու հիմնական բնութագիրը ներկայացնելուն:

Երրորդ խնդիրը վերաբերում է Իլամի էթնիկ հանրությունների, ցեղերի ու ցեղային միությունների տնտեսությունը բնութագրելուն: Տնտեսությունը, որպես համակարգ, դիտարկվում է զարգացման ու փոփոխությունների մեջ, հիմք ընդունելով այն, որ այս տարածքը քոչվոր անասնապահության յուրօրինակ արեալ է:

Առանձին խնդիր է սոցիալական մշակույթի ուսումնասիրությունը: Իլամում ընտանիքը անցել է զարգացման բարդ ու հակասական ճանապարհ: Ցեղային հիերարխիկ կառույցի գերակայության պայմաններում և տղամարդկանց և կանանց գործառույթները բխել են նույն կառույցի առանձնահատկություններից, ծառայել համակարգի ամբողջականության ապահովման նպատակին:

Ատենախոսության գիտական նորույթը: Առաջին անգամ ազգագրական մեթոդների կիրառմամբ, իլամցիների ընտանիքը, ցեղային կառույցը, սոցիալական մշակույթը դիտարկվում են պատմական զարգացման ու փոխակերպումների գործընթացում: Կարևորվում է երեք համալիրի գոյությունը, ցույց է տրվում, որ քոչվոր անասնապահները, նստակյաց երկրագործներն ու ուրբանիստ-քաղաքաբնակները հազարամյակներ շարունակ մշակել ու կիրառել են փոխլրացնող ու փոխհարստացնող համակարգ:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմել են դաշտային ազգագրական հետազոտությունները, որ իրականացվել են Իլամի քաղաքային ու գյուղական բնակավայրերում: Դաշտային ազգագրական նյութերը, որոնք գրառվել են նախապես կազմված և ղեկավարի հետ համաձայնեցված հարցարանով, հնարավորություն են տվել մասամբ լրացնել այն բացը, որն առկա է Իլամի ազգագրական հետազոտություններում: Աշխատել ենք նաև արխիվներում ու գրադարաններում՝ Իլամ նահանգի հանրային և համալսարանական գրադարաններ, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գրադարան, ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարան, Համադան, Խուզիստան, Իսֆահան նահանգների արխիվներ, Իրանի ազգային արխիվ, Թեհրանի համալսարանի արխիվային կենտրոն, Իսլամական հեղափոխության արխիվային կենտրոն, Արտաքին գործերի նախարարության հետազոտությունների կենտրոն և այլն:

Օգտագործված գրականության տեսություն: Եթե սկսենք ամենավաղ փուլից, կարող ենք ասել, որ հնագիտորեն Իլամը լավ է ուսումնասիրված, հատկապես մեծ թիվ են կազմում Լուրիստանի նշանավոր բրոնզիդարյան մշակույթի հետազոտությունները:

Հետագա հարյուրամյակներին վերաբերող աղբյուրներն ավելի սահմանափակ են. դրանք “խոսում են” այնքանով, որքանով Լուրիստանի ու Փոշթեքուհի զարգացումները առնչվում են համաիրանական զարգացումներին: Համեմատաբար հարուստ պատմագիտական ու ազգագրական նյութ պարունակում են 18-19-րդ դարերի աղբյուրները, հատկապես Լուրիստան և Իլամ այցելած ճանապարհորդների վկայությունները. կարևոր են հատկապես Ռաուլինսոնի և Քերզոնի վկայությունները:

Իլամի պատմությանն ու ազգագրությանը վերաբերող հիմնական գրականությունը ստեղծվել է 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի ընթացքում: Այն ինչպես պարսկերեն է, այնպես էլ ռուսերեն ու բազմաթիվ այլ լեզուներով: Ա. Սաքին իր աշխատություններում ուսումնասիրել է Լուրիստանի քաղաքական պատմությունը, լեզվամշակութային նկարագիրը:[3] Լուրիստանը և Իլամը հետազոտած մասնագետներից է Զ. Սարաին, ով "Մառախլապատ բարձունքների բանաստեղծը" գրքի մի բաժինը նվիրել է վալիների կառավարմանը: Իր աշխատություններից մեկում՝ "Բոլոր ժամանակների հնագույն մշակույթն ու պատմությունը" անվանի հետազոտող Քարամ Ալի Ռեզային անդրադարձել է Փոշթեքուհի մշակութային խնդիրներին և վալիներից երկուսի կառավարման ժամանակահատվածին: Նուրեդդին Նեմմաթին իր "Իլամ նահանգի կրթամշակութային պատմությունը" աշխատության մեջ անդրադարձել է Իլամի կրթական և մշակութային գործընթացների ուսումնասիրությանը: Անվանի հետազոտողներից է նաև Մ. Ազբարին, ով իր "Իլամի և Լուրիստանի պատմությունը" աշխատությունում անդրադարձել է 19-րդ դարի Իլամի և Լուրիստանի պատմական անցքերի ուսումնասիրմանը: Վերջին մի քանի տասնամյակում հրատարակվել են նաև Իլամի պատմությանն ու ազգագրությանը վերաբերող այլ մենագրություններ ու հոդվածներ, որոնք հղված են ատենախոսության համապատասխան բաժիններում:

Ատենախոսությունը շարադրելիս, գիտական ղեկավարի խորհրդով, թարգմանաբար, անդրադարձել ենք նաև ռուս ու խորհրդային արևելագետների՝ տարածաշրջանի ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեցող աշխատություններին. Վ. Մինորսկի[4], Վ. Բարտոլդ[5] և ուրիշներ[6]: Ատենախոսությունում, թարգմանաբար, օգտագործել ենք նաև ռուսերենով ազգագրական գրականություն: Կարևոր հետազոտություններից է "Народы Передней Азии"[7] կոլեկտիվ մենագրությունը, որի հեղինակները դիտարկում են Իրանի ազգագրական բնութագրին վերաբերող տարբեր հարցեր: Բավականին մեծ թիվ են կազմում անգլերենով հրատարակությունները: Արժեքավոր է հատկապես Մորթենսենի[8]՝ Լուրիստանի քոչվորներին վերաբերող մենագրությունը: Ուսումնասիրությունների[9] մի խումբ վերաբերում է տարածաշրջանի քաղաքական,

---

[3] Ա. Սաքի, Լուրիստանի պատմաաշխարհագրությունը ու պատմությունը, էջ 295:

[4] V. Minorsky, The tribes of Western Iran, Journal of Royal Anthropological Institute of Great Britain and Ireland, vol 75, London, 1945, էջ 73-80:

[5] В. Бартольд, Сочинения, том VII, Работы по исторической географии и истории Ирана, М., Восточная литература, 1971, էջ 178-189.

[6] И. Петрушевский, Земледелие и аграраные отношения в Иране XIII-XIV веков, М.-Л., 1960; Иранистика в России и иранисты, М., 2001 (ред. Л. Кулагина); Н. Кузнецова, Иран в первой половине XIX века, М., 1983; И. Дьяконов, История Мидии от древнейших времен до конца IV века до нашей эры, М., 1956:

[7] Народы Передней Азии, серия Народы мира, М., Наука, 1957.

[8] I. D. Mortensen, Nomads of Lurestan, London, Thames & Hudson, 1993:

[9] A. Alizade, The Rise of the Highland Elamite State in Southwestern Iran: "Enclosed" or Enclosing Nomadism?, Current Anthropology, Vol. 51, No. 3 (June 2010), pp. 353-383; J. Pullar, Early Cultivation in the Zagros, Iran, Vol. 15 (1977), pp. 15-37; M. Rowton, Autonomy and Nomadism in Western Asia, Orientalia, NOVA SERIES, Vol. 42 (1973), pp. 247-258; M. Rowton, Enclosed Nomadism, Journal of

նաև՝ տնտեսական պատմությանը: Դրանցում համակողմանի քննության առարկա են դարձել քոչվորության ձևավորման ու զարգացումների վերաբերյալ հարցերը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ Իլամի պատմության և ազգագրության հետազոտման, քոչվոր տնտեսաձևի ազգագրական դիտարկումների, քոչվորների ու նստակյացների փոխհարաբերությունների ազգաբանական-մշակութաբանական առումների ուսումնասիրության համար:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ներկայացվում են թեմայի ուսումնասիրության կարևորությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, տրվում է աղբյուրների ու գրականության վերլուծությունը, կառուցվածքը:

ԳԼՈՒԽ 1

Իլամ (Փոշթեքուհ) նահանգի աշխարհագրական, պատմազգագրական բնութագիրը և պատմության հիմնական փուլերը

1.1 Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները.

Իլամ նահանգը գտնվում է Իրանի արևմտյան հատվածում,[10] Իրանի Իսլամական Հանրապետության 31 նահանգներից մեկն է: Տարածքը շուրջ 20000 քկմ^2 է: Հյուսիսից սահմանակից է Քերմանշահ, արևելքից՝ Լուրիստան, հարավից և հարավ-արևելքից՝ Խուզիստան նահանգներին, իսկ արևմուտքից՝ Իրաքին, որի հետ ընդհանուր սահմանի երկարությունը 425 կմ է: Նահանգի բնակչությունը, ըստ 2015թ. տվյալների, շուրջ 600 հազար է, բնակչության շուրջ 80%-ը ներկայում կազմում են քրդերը, մինչդեռ նախկինում մեծամասնություն են կազմել լուրական տարբեր ցեղերը: Քրդերը մեծամասնություն են նահանգի հյուսիսային հատվածներում: Դարեշահրում, ընդհակառակը, բնակչության մեծամասնությունը խոսում է լաքերեն և լուրերեն: Այս լեզուներով խոսողներ կան նահանգի այլ շրջաններում ևս: Ըստ վերջին վարչատարածքան բաժանման, Իլամ նահանգը կազմված է յոթ շահրեսթանից կամ շրջանից. Իլամ, Շիրվան-ե Չարդավոլ, Դոհոլրան, Մեհրան, Էյվան, Դարեշահր և Աբդանան: Նահանգի կենտրոնը Իլամ քաղաքն է, որի բարձրությունը ծովի մակերևույթից 1440մ է:

---

the Economic and Social History of the Orient, Vol. 17, No. 1 (Mar., 1974), pp. 1-30; P. Jo Watson, Nomads of Luristan: History, Material Culture, and Pastoralism in Western Iran by Inge Demant Mortensen, Journal of the American Oriental Society, Vol. 116, No. 3 (Jul. - Sep., 1996), p. 573:

[10] Ի. Աֆշար, Իրանագիտական հոդվածներ, Թեհրան, 1992, էջ 405; Յ. Սաֆավի, Իրանի ռազմաշխարհագրության ներածություն, Իմամ Հոսեին համալսարան, 1996, էջ 31:

Աշխարհագրական տեսանկյունից Իլամը Լուրիստանի մաս է և բնութագրվում է նույն լեռնակազմական, ջրագրական և այլ հատկանիշներով: Բուն Իլամի տարածքը, արևելքից և հյուսիսից եզերվելով Քաբիրքուհ և Քուհմանեշթ լեռնազանգվածներով կարող է բնութագրվել որպես լեռնային: Նահանգի ներսում, հստակ առանձնանում է երկու հիմնական արեալ: Քաբիրքուհի արևելյան և հյուսիս-արևելյան հատվածը հայտնի է Փիշքուհ անվանումով, իսկ արևմտյան և հարավ-արևմտյան հատվածը հայտնի է Փոշթեքուհ կամ հենց Իլամ անվանումով[11]: Դաշտավայրերն Իլամում մեծաքանակ չեն և ընդհանուր առմամբ զբաղեցնում են փոքր տարածություն: Դրանք հիմնականում գտնվում են Իլամ շահրեսթանում: Իլամը (Փոշթեքուհը) համարվում է Լուրիստանի ամենալեռնային երկրամասը: Փոշթեքուհի լեռնակազմությունը բավականին բարդ է: Գրեթե ողջ տարածքը ընդգրկող լեռնաշղթաները հիմնականում 4-ն են: Նահանգի տարածքով հոսող գետերը հիմնականում սկիզբ են առնում Քաբիրքուհ լեռնային զանգվածից: Իլամի առավել խոշոր գետերն են Սայմարեն (Գամասիաբ, Քարխե), Գեդարխոշ, Քանջանչամ, Չանգուլե, Մեյմե, Դավիրաջ, Գավի[12]:

Ռելիեֆն ու այլ իրողություններ բերել են նրան, որ այստեղ զարգացած է եղել երկրագործա-անասնապահական համալիրը, իսկ երկրագործության և անասնապահության հարաբերակցությունը տարբեր հատվածներում եղել է տարբեր:

1.2. Պատմության հիմնական փուլերը. համառոտ ակնարկ

Իլամը[13], ըստ հնագիտական, աղբյուրագիտական ու այլ տվյալների, ունի առնվազն մի քանի հազարամյակի պատմություն: Ինչպես վաղ, այնպես էլ հետագայի զարգացումները կապված են տարածքի վաղ պետական կազմավորումներից մեկի՝ Էլամական թագավորության հետ: Վաղ պետական կազմավորումների ձևավորման գործընթացը Միջագետքում և հարավ-արևմտյան Իրանում, որը, ամենայն հավանականությամբ, սկիզբ էր առել մ. թ. ա. 5-րդ հազարամյակում, ավարտական փուլ մտավ մ. թ. ա. 4-րդ հազարամյակի վերջին: Հարավային Միջագետքում խոշոր կենտրոնները կարողացան աճել և համախմբել նաև երկրի ծայրամասային շրջաններն այն դեպքում, երբ արևմտյան ու կենտրոնական Իրանում, ի մասնավորի Սուսիանայում, այսինքն, հարևան տարածքում տեղի ունեցավ ապաբնակեցում, ավելի ճիշտ՝ ապանստակեցում:[14] Այս միտումը հետևեց, եթե ոչ որպես պատճառ ուներ Միջագետքի շուրջ կես հազարամյակ տևած մշակութային ու քաղաքական դոմինանտությունը, մինչև

---

[11] Ի. Աֆշար, Հայացք դեպի Իլամը, Թեհրան, 2003, էջ 199:

[12] Հ. Մահմուդիան, Ծանոթացում Իլամ նահանգի աշխարհագրության հետ, էջ 4:

[13] Դեռևս որոշ շումերական սեպագրերում այս տարածքն անվանվում է նաև Ալամ, Ալամո, որը թարգմանաբար նշանակում է բարձր լեռներ, որտեղ ծագում է արևը:

[14] Այս մասին մանրամասն տես՝ A. Alizade, նշվ. աշխ., pp. 353-383; J. Pullar, Early Cultivation in the Zagros, Iran, Vol. 15 (1977), pp. 15-37; M. Rowton, Autonomy and Nomadism in Western Asia, pp. 247-258; M. Rowton, Enclosed Nomadism, pp. 1-30; P. Jo Watson, Nomads of Luristan: History, Material Culture, and Pastoralism in Western Iran by Inge Demant Mortensen, Journal of the American Oriental Society, Vol. 116, No. 3 (Jul. - Sep., 1996), p. 573:

պատմականորեն որպես Էլամ կամ Էլամիթական պետություն հայտնի կազմավորման ի հայտ գալը: Շատ հետազոտողներ Էլամիթական պետությունը դիտարկում են որպես յուրօրինակ “բունդես-հանրապետություն”, որի մեջ մտնում էին լեռնային գոտու ցեղային միավորումների փոքր կազմավորումները, առանցքում ունենալով Սուսիանան ու Ֆարսը որպես երկու հիմնական բաղադրիչ:

Ատենախոսության խնդիրների դիտարկման համար կարևոր նշանակություն ունի Իլամի պատմության հերթական ու ոչ պակաս կարևոր փուլը: Իլամի (Փոշթեքուհի) պատմության ընթացքը արմատապես փոխվել է այն պահից, երբ արիացիները մուտք գործեցին Իլամի թագավորության տարածք: Լուրիստանը և Փոշթեքուհը աքեմենյան ժամանակաշրջանում մաս են կազմել իլամական սատրապության: Աքեմենյան ժամանակաշրջանից Փոշթեքուհի վերաբերյալ վկայությունները շատ չեն: Հետագա հարյուրամյակների զարգացումների վերաբերյալ տեղեկությունները ևս սահմանափակ են:

Համեմատաբար հարուստ վկայություններ ունենք արաբների հաատատումից հետո, երբ այս տարածքում սկսվեցին կրոնով պայմանավորված գործընթացներ: Զարգացումները բարդ ու հակասական էին նաև հետագա՝ սելջուկ ու այլ տիրապետողների գերիշխանության շրջանում, երբ շարունակվում էր անընդհատ պայքարը ռազմվարական լուրջ կարևորություն ունեցող այս արեալի նկատմամբ գերիշխանություն հաստատելու համար:

Փոշթեքուհ անվանումը շրջանառության մեջ մտել է դաջարական ժամանակաշրջանից, երբ Լուրիստանի վալիների տիրապետության ներքո գտնվող նահանգի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան հատվածները տեղացիների կողմից առավելապես հայտնի է դարձել որպես Փոշթեքուհ[15]: Հիշյալ տարածքը Շահ Աբասի օրոք մինչև դաջարների Աղա Մուհամադ Խանի ժամանակաշրջանը հայտնի է եղել որպես Լորեսթան-ե Ֆիլի:

Ղաջարների կառավարման սկզբնական շրջանից, մասնավորապես Ֆաթալի շահի օրոք, Լուրիստան նահանգը բաժանվեց երկու հատվածի: Մի հատվածը ընդգրկում էր Զագրոսի Ջեբալ լեռնաշղթան և Քաբիրքուհի արևմտյան ու հարավային շրջանները, դա հենց Փոշթեքուհն էր, իսկ մյուս մասը, որը տեղակայված էր հյուսիսային և արևելյան հատվածում անվանակոչվեց Փիշքուհ: Հետագա դարերի ընթացքում Փոշթեքուհի և Փիշքուհի Լուրիստանը անվանակոչվեց Փոքր Լուր:

Իլամի, լայն առումով՝ Լուրիստանի զարգացման, հասարակական հարաբերությունների վրա էական ազդեցություն ունեցավ վալիների կառավարման շրջանը: Սա այն ժամանակահատվածն է, երբ քաղաքական իրավիճակը ազդում էր ցեղային կառույցի, ցեղային միությունների կայունության ու ներքին զարգացումների վրա: Լուրիստանի և Իլամի պատմության ճակատագրական շրջանները 19-20-րդ դարերն էին, երբ տարածքի զարգացումների վրա ազդում էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բազմաթիվ գործոններ: Իրանի պատմության նոր էջ է բացվում

[15]Փոշտեքուհը Զագրոսի ամենամեկուսացված, բարձրլեռնային և դժվարամատչելի մասն է, և այդ պատճառով լուրերն այն անվանում են “Չար ոգիների երկիր”: В. Балаян, Некоторые аспекты этнического развития луров Ирана, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Իրան, IV, Եր., Գիտություն, 1969, էջ 95:

Ռեզա խանի իշխանության գալով, 1920-ական թթ.: Վերջինս իր առջև նպատակ դրեց վերականգնել երկրի միասնականությունը, որի հիմքերը մեծապես խարխլվել էին Ղաջարների օրոք: Իր նպատակին հասնելու համար Ռեզա խանը պետք է նախ և առաջ վերացներ երկրի առանձին հատվածներում խաների, վալիների կիսանկախ կարգավիճակը: Այդ տեսանկյունից Փոշթեքուհը, որպես ռազմավարական նշանակության սահմանային նահանգ, կարևոր տեղ էր զբաղեցնում Ռեզա խանի ծրագրերում: Հենց Ռեզա խանի կառավարման շրջանում է, որ վերջնականապես պատմական թատերաբեմից հեռացան ավելի քան երկու հարյուր տարի ակտիվ քաղաքական դերակատարում ունեցած վալիները: Փոշթեքուհի վալիների գերդաստանի պատմական ասպարեզից հեռանալու վերաբերյալ տխրությամբ է խոսում Մալեք Ալ-Շոարա Բահարը՝ նշելով հետևյալը. “Փոշթեքուհի վալիների երկու հարյուր տարվա փառահեղ պատմությունը անիմաստ ավարտ ունեցավ, բայց դա կարող էր նաև այդպես չլինել. . .”[16]:

ԳԼՈՒԽ 2

Իլամի ցեղային միավորումները. կառուցվածքը, հիմնական բնութագիրը

Իրանագետները Լուրիստանի (Իլամը ներառյալ) հիմնական էթնիկ հանրությունների՝ լուրերի և քրդերի ծագումը փորձել են կապել տարածաշրջանի վաղ շրջանի էթնիկ հանրությունների հետ, լուրերին, բախտիարներին ու քրդերին ներկայացնելով որպես վերջիններիս ժառանգորդներ: Նման հիմքեր տվել են հատկապես հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված հարուստ հնագիտական նյութերը, մասնավորապես, գտածոների այն համախումբը, որն այսօր հայտնի է որպես “լուրիստանյան բրոնզ”: Իրանի պատմության և մշակույթի խոշորագույն գիտակ Մ. Դյակոնովը ենթադրում էր, որ դրանք կարող են կապ ունենալ քասսիթների՝ Լուրիսթանի տարածքում մ. թ. ա. 18-16-րդ դարերում բնակված լեռնային ժողովրդի հետ:

Ժամանակակից հետազոտողները, ընդունելով հանդերձ իրանականության վերաբերյալ տարբեր փաստարկները, միաժամանակ, հակված են կարծել, որ լուրերի իրանականության (իրանական ծագման) մասին կարելի է խոսել լայն առումով, դիտարկելով ժամանակակից լուրերենի պատկանելությունը իրանական լեզուների ընդարձակ խմբին, ինչը, սակայն, դեռևս բավարար չէ լուրերին իրանական ծագում վերագրելու համար, չնայած որ կարող է դիտարկվել որպես հատկանիշ: Լուրերը չեն հիշատակվում նաև Հերոդոտոսի՝ հինիրանական ցեղերի շարքում, բացահայտված չէ նաև լուրերենի կապը աքեմենյան սեպագրերի հետ:

Իրանական ծագման մասին տեսակետներին զուգահեռ, տարածում են ունեցել նաև լուրերի քրդական ծագման մասին ավելի վաղ տեսակետները: 19-րդ դարում հրատարակվեցին 16-րդ դարի հեղինակ Շերեֆ-խան Բիդլիսիի ժամանակագրությունները, որը, վկայակոչելով 10-րդ դարի արաբական աղբյուրները, գրում էր, որ Սիրիայից Զագրոսի շրջաններ եկած քրդական ցեղերի շարքում էին նաև լուրերը և բախտիարները:

[16] Նույն տեղում, էջ 168

Ի սկզբանե Իրանը գտնվել է նաև ռուս, հետագայում՝ խորհրդային արևելագետների գիտական հետաքրքրությունների շրջանակում: Իրանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են ականավոր արևելագետներ Վ. Բարտոլդը, Վ. Մինորսկին և ուրիշներ: Տեսակետների՝ վերը նշված հակասականությունը բնորոշ է նաև խորհրդային իրանագիտությանը: Ականավոր արևելագետ Վ. Բարտոլդը, օրինակ, 23 տարի անց այն բանից, երբ առաջին անգամ խոսել էր լուրերի իրանական ծագման մասին, վերադարձավ լուրերի ազգասերման խնդիրներին, սակայն արդեն վերանայված հայեցակարգի շրջանակներում: Այժմ նա գտնում էր, որ սկզբնապես, հավանաբար, իրանցիներ չէին քոչվոր և կիսաքոչվոր այն ցեղերը, որոնք բնակվում էին Թուրքիայի և Իրանի միջև մինչև 1918թ. գոյություն ունեցած սահմանի երկայնքով: Տարբեր գործոնների ազդեցության արդյունքում, իսլամական շրջանում արդեն այս լեռնականները խոսում էին իրաներեն և արաբներին հայտնի էին ընդհանուր “քուրդ” անվանումով: Այսինքն, հայտնի հետազոտողը ցուցաբերում է մոտեցում, համաձայն որի պետք է տարբերակել էթոնեգեզի և լեզվական գործընթացները: Լեզվաբանի տեսանկյունից, գրում էր Վ. Բարտոլդը, այժմ էլ քուրդ են համարվում այն լեռնականները, որոնք բնակվում են բացառապես Պարսկաստանի տարածքում և իրենք իրենց քուրդ չեն համարում. դրանք լուրերն ու բախտիարներն են: Վ. Մինորսկին, ի հավելումն այս ամենին, գրում էր նաև, որ միջնադարյան արաբ աշխարհագետները “քուրդ” տերմինն հաճախ օգտագործում էին որպես քոչվորի հոմանիշ: Նույնիսկ Խուզիստանի արաբներին նրանք անվանում էին Շուրիստանի քրդեր:

Աղբյուրների համակողմանի քննությունը ցույց է տվել, որ Լուրիստանի ամենաբազմալեզու մարզը Իրաքին սահմանակից լեռնային Փոշթեքուհն է, այսինքն, սույն ատենախոսության օբյեկտը: Այստեղ բնակվող լուրերը որոշակիորեն տարբերվում էին ինչպես իրենց ազգակից այլ լուրական ցեղերից, այնպես էլ հարևան քրդերից ու այլ էթնիկ հանրություններից: Փոշթեքուհում բնակվող լուրերը, ի տարբերություն քրդերի, կոչվում էին “լոր-ֆեյլի”, թարգմանաբար՝ ժամանակակից լուրեր:

Փոշթեքուհի լեզվական խայտաբղետությունն ապշեցուցիչ է: Լոր-է-ֆեյլի լեզվով խոսում է 11 էթնիկ խումբ. *ալիշիրվան, բաղրեյ, ասրաբ, բարդիե, գյարրու, գյալիլվանդ, համլիվալի, մալեք-ջալի, խանի-մալի, չէհար-դահիլ և ամալե:* 9 այլ միավորումներում *(դեհբալա, սուլեյմանի, մալեքշահի, մուրադխանի և այլն)* խոսում են խառը քուրդ-լուրական խոսվածքով, որն ընդունված է անվանել “քուրդի-է-լուրի”: Սա լաքերենը չէ և տարբերվում է քրդերենից և պարսկերենից... Այս ամենը խոսում է Հյուսիսային Լուրիստանում խառը քուրդ-լուրական լեզուների գոյության մասին, որոնք ձևավորվել են լուրերենի և քրդերենի փոխազդեցությունների արդյունքում լուր-քուրդիստանյան սահմանային գոտիներում:

Լուր էթնանունը պատմական աղբյուրներում հաճախակի սկսում է հանդիպել սկսած 10-11-րդ դարերից. ալ-լորիե, լարիե, բելլադ, ալ-լուր, լուրիե և այլ տարբերակներով[17]: Չնայած էթնանվան գոյությանը, մինչև 15-16-րդ դարերը աղբյուրներում շատ քիչ բան կարելի է գտնել տարբեր լուրական ցեղերի

[17] Մ. Բահարվանդ, Լուրական ցեղը, Թեհրան, 1987, էջ 19:

կենսակերպի, մշակույթի, սոցիալ-մշակութային այլ իրողությունների մասին: Միայն 15-րդ դարից սկսած է, որ որոշ պատմիչներ, ինչպես օրինակ Համդոլլահ Մոսթոուֆին, Մոհինէդդին Նաթանզին և Ղազի Ահմադ Իբն Մոհամադ Ղաֆֆարի Քաշանին, որոշ տեղեկություններ են հայտնում լուրերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է լուրերի վերաբերյալ ավելի ուշ շրջանի հիշատակություններին, ապա դրանք արդեն բավականաչափ շատ են, ընդ որում, դրանցում անդրադարձ կան նաև "լուր" էթնանվան առաջացմանը: Գոյություն ունի էթնանվան ծագման երեք հիմնական վարկած.

1. *լուր են կոչվել Լուր անունը կրող ցեղապետի սերունդները,*
2. *լուր էթնանունը ծագում է լահարասբ, այսինքն՝ գեղեցիկ ձի ունեցող իրանական արտահայտությունից,*
3. *էթնոնիմը ծագել է տվյալ տարածքի՝ Լուրիստանի անվանումից:*

Մեր կարծիքով, տարբեր մոտեցումների ու դրանց հիմքում դրվող փաստարկների համակողմանի քննությունը թույլ է տալիս պնդել, որ լուր էթնանունը ծագում է Ալ-Ալուր հնագույն քաղաքի անվանումից, որը 11-12-րդ դարերում համարվում էր միջնադարի ամենահայտնի քաղաքներից մեկը:

Բազմիցս նշեցինք, որ բավականին բարդ ու խայտաբղետ է եղել նաև Արևմտյան Իրանի, այդ թվում՝ Լուրիստանի և Իլամի ցեղային կազմը:

Վ. Մինորսկին, խոսելով լուրաբնակ տարածքների մասին, նշում է, որ Արևմտյան Իրանում լուրախոսները միավորվում են հիմնականում տարածքային խմբերում:

<u>Առաջինը Մամաս(գ)անիներն են,</u> ովքեր բնակվում են հարավում, Ֆարսը Խուզիստանին միացնող հովիտներում:

<u>Հաջորդը Քուհ-Գիլուներն են,</u> ովքեր բնակվում են մամազանիներից հյուսիս և ովքեր նշանակալի կեպով խառնվել են իրենց տարածքներում հաստատված թուրքական կլանների հետ: Նույնիսկ հիմնական կլանի անվանումը՝ Աղաչարի, ծագում է հին թուրքական կլանի անվանումից և նշանակում է "փայտահատ":

Քուհ-Գիլուներից հյուսիս, Իսպահանի և Խուզիստանի միջև, բնակվում են <u>բախտիարական տարբեր ցեղախմբեր</u>: Այս անվանումը, ենթադրաբար, ժամանակակից անվանում է: Բախթիարիայի հին ավանումը եղել է Մեծ լուր:

Հաջորդը <u>Փոքր Լուրն է Փուս-Քուհում և Փուշթ-ի-Քուհում:</u> Լուրիստանի հյուսիսային և արևմտյան մասերը ձևավորվեցին կամ միավորվեցին որպես Փոքր Լուրիստանի համադաշնություն և կառավարվեցին նույնպես տեղական նշանավոր դինաստիաների կողմից (1184-1597): Դա աթաբեկների մյուս հարստությունն էր, որը Փոքր Լուրում կարողացավ իշխել 413 տարվա ընթացքում:

Մեր դիտարկումներն ու գրառած դաշտային ազգագրական նյութերը թույլ տվեցին արձանագրել ժամանակակից Իլամի տարածքում հիմնական ցեղախմբերի ու ցեղերի տարածման հետևյալ պատկերը.

- ***<u>Մալեքշահի.</u>*** բաղկացած է հետևյալ ցեղերից՝ գաչի, խամիս, քալլևանդ, ռասիլևանդ, բավլաք, խալիլվանդ. քարիվանդ, ղեյթուն, քազամբագ, բարյաբ, բավե, համդաթաք և խուրիվանդ:
- ***<u>Հալիլան և Զարդելան.</u>*** բաղկացած է հետևյալ ցեղերից՝ բալավանդ, զարդելանի, թարահանի, ջալալվանդ և օսմանվանդ:

- ***Շուհան.*** բաղկացած է հետևյալ ցեղերից՝ բալուչ, շարաֆ, ղեյթուլ, քավարի, ֆալաք, քելավիվանդ, քուհեր և բարե:
- ***Քրդեր.*** բաղկացած է հետևյալ խոշոր տոհմերից կամ ցեղերից՝ մորադխանի, շեքարբեյգի, սոլեիմանխանի, դինարվանդ և քայադխորդե:
- ***Էյվան.*** բաղկացած է հետևյալ ցեղերից՝ բանսեյրի և չոլաք:
- ***Խազալ.*** բաղկացած է հետևյալ ցեղերից՝ շանսիվանդ, խաֆարվանդ, մորշեդվանդ և ղալիվանդ:
- ***Արաբվազի.*** բաղկացած է հետևյալ ցեղերից՝ գարդել, մովրաթ, մեյսամ, ղեյթուլի, միր, մովամար, ղերշավանդ, մալեքշավանդ, բայ, քարշավանդ, քարախման, ղավայուգ:

Սրանցից որոշները, դեռևս նախորդ դարի ընթացքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունների արդյունքում, անցել են նստակեցության, իսկ որոշները դեռևս շարունակում են նախապատվությունը տալ քոչվոր կամ կիսաքոչվոր կացութաձևին, չնայած վերջինս ենթարկվել է բավականին լուրջ ու արմատական փոփոխությունների:

ԳԼՈՒԽ 3
Տնտեսության ընդհանուր բնութագիրը, հիմնական տնտեսական զբաղմունքները, կենսապահովման համակարգը:

Իլամի և ընդհանրապես Լուրիստանի տնտեսությունը բնութագրելիս հետազոտողը պարտավոր է հաշվի առնել, որ տարածաշրջանը քոչվորության դասական արեալներից է: Մյուս կողմից, հարկավոր է հաշվի առնել նաև այս տարածքում նստակեցության ավանդույթների գոյությունն ու այն, որ քոչվորներն ու նստակյացները գտնվել են շփումների, երբեմն նաև՝ զինված բախումների մեջ:

Փուշթեքոհի լուրերը քոչվոր-անասնապահներ են: Երկրագործությունը նրանց տնտեսությունում երկրորդական դեր ունի:

Քոչվորության պարսիկ մասնագետներից Ա. Ալիզադեն, ամբողջացնելով Արևմտյան Իրանի, մասնավորապես Զագրոսի լեռների քոչվորների ու կիսաքոչվորների տնտեսական համալիրների վերաբերյալ մոտեցումները, շարունակում է այն մոտեցումը, համաձայն որի Արևմտյան Իրանում, մասնավորապես Զագրոսում, քոչվորությունը առանձնանում ու տարբերվում է Կենտրոնական Ասիայի ու Եվրասիայի այլ տափաստանային ու կիսաանապատային տարածքների համանման համալիրներից: Տարածաշրջանի տնտեսությունը բնութագրելու համար հեղինակը կիրառելի է համարում "ներփակված քոչվորություն" տերմինը, որն առաջարկել է Լաթիմորը 1962թ., ցույց տալու համար այն տարբերությունները, որ գոյություն ունեն Արևմտյան Ասիայի և եվրասիական անծայրածիր տափաստանների քոչվորների միջև[18]:

[18] A. Alizade, նշվ. աշխ.; J. Pullar, Early Cultivation in the Zagros, pp. 15-37; M. Rowton, Autonomy and Nomadism in Western Asia, pp. 247-258; M. Rowton, Enclosed Nomadism, pp. 1-30; P. Jo Watson, Nomads of Luristan: History, Material Culture, and Pastoralism in Western Iran by Inge Demant Mortensen, p. 573;

Մայքլ Ռոութոնը, 1974թ. այս տերմինը գործածում է դարձյալ Արևմտյան Իրանի համար բնորոշ քոչվորության այն տիպը բնութագրելու համար, որը շրջապատված է քաղաքային բնակավայրերով: Հետևելով Ռոութին, կարելի է ասել, որ ներփակված քոչվորության հիմնական բնութագիրը վերջինիս սիմբիոտիկ, տնտեսական, քաղաքական կապերի և հարաբերությունների չափազանց բարձր մակարդակն է նստակյացների հետ: Այս տիպը բնութագրելիս հարկավոր է հաշվի առնել, որ քաղաքային կենտրոններն ու նստակյաց բնակչության երկրագործական օջախները "ֆիզիկապես շրջապատված" են քոչվորական բարձրլեռնային գոտիներով, իսկ քաղաքական համակարգը, չնայած նստակեցության առաջնայնությանը, մասամբ պայմանավորում է հենց քոչվոր հասարակությունը[19]:

Այսպիսով, քոչվորության դասական բնութագրիչների հաշվառմամբ, Զագրոսի լեռների (նաև վերջինից արևմուտք գտնվող հատվածների– հեղ.) սոցիալական խմբերը չեն կարող դիտարկվել որպես դասական առումով քոչվորներ, այն իմաստով, ինչ իմաստով հասկացությունը կիրառվում է կենտրոնասիական տափաստանների, Սահարայի, Նեգևի կամ Ջազիրայի անասնապահների նկատմամբ: Ավելի ճիշտ տերմինը այս խմբերին բնութագրելու համար կարող է լինել "շարժուն ագրո-անասնապահներ" կամ "կիսաքոչվոր ագրոանասնապահներ" տերմինը:

Այսինքն, համեմատելով հնագիտական ու աղբյուրագիտական տվյալները ու այն իրավիճակը, որը մենք տեսնում ենք ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը, մինչև Ռեզա շահի կողմից պարտադրված փոփոխությունները, կարող ենք արձանագրել, որ Լուրիստանում ընդհանրապես ու Իլամում մասնավորապես, այստեղ բնակվող լուրերի, բախտիարների, քրդերի ու այլ էթնիկ հանրությունների շրջանում քոչվոր անասնապահությունը բնութագրվում է որպես յուրօրինակ մի համակարգ, որն առավելագույնս է համապատասխանեցված առնվազն երկու հիմնական պահանջմունքի բավարարմանը: Քոչվոր անասնապահները, բնատնտեսության պայմաններում մի կողմից կարողանում են բավարարել սեփական նվազագույն պահանջները, մյուս կողմից, ներփակված քոչվորության պայմաններում, ստիպված ձևավորում ու զարգացնում են հարաբերություններ նստակյացների, այդ թվում՝ քաղաքների բնակիչների հետ, պահանջմունքների այն մասը բավարարելու համար, որն ինքնուրույն համալրել չեն կարող:

Հետազոտողները, որպես զագրոսյան տիպի յուրահատկություն դիտարկում են ևս մեկ իրողություն: Դա ժամանակի ընթացքում սեփական կարիքների բավարարման ռեսուրսներ բազմազանեցումն է: Բարձրլեռնային հատվածներում, հիմնականում սեպտեմբեր ամսին, այսինքն զոտին լքելուց անմիջապես առաջ, բազմաթիվ ցեղեր որպես կանոն, հիմնականում գարի էին ցանում, որը այնուհետև մնալով ձյան տակ, հասունացումը սկսում էր արդեն գարնան ամիսներին, հասունանալով ուշ ամռանը:

Ընդհանուր առմամբ, երկրագործությամբ զբաղվելը քոչվորների համար ուներ ռազմավարական նշանակություն: Այն ընձեռում էր քոչվոր տնտեսությանը և կենսակերպին բնորոշ տարաբնույթ բնապահպանական ու քաղաքական

[19] A. Alizade, նույն տեղում, էջ 353:

ճգնաժամերին հարմարվելու ավելի մեծ ազատությունների ու ճկունության հնարավորություն:

Քանի որ միայն անասնապահական հիմք ունեցող քոչվորությունը չէր ընձեռում տնտեսական աճի, տարբերակման ու ընդարձակման հնարավորություններ, քոչվորները ստիպված էին օգտագործել բոլոր մատչելի ռեսուրսները: Ֆ. Զալցմանն քոչվորների կողմից կիրառվող այս պրակտիկան անվանում է "բազմառեսուրսային քոչվորություն", ինչը, հատկապես ռեսուրսներից աղքատ տարածքներում, ներառում էր նաև նստակյաց գյուղերի ու քաղաքների վրա անընդհատ հարձակումները:

Նյութերը վկայում են, որ հող ձեռք բերելու, երկրագործությունը զարգացնելու և որոշ դեպքերում ոռոգման համակարգեր ստեղծելու ցանկությունը բխում էր հիմնականում ցեղային ավագանուց, խաներից, որոնք այսպիսով լուծում էին մի քանի խնդիր միաժամանակ: Այն դեպքում, երբ գյուղատնտեսական պրակտիկան շարքային քոչվորին տալիս է որոշակի ապահովություն բնական աղետների ու ճգնաժամերի դեպքում, հողի տնօրինումն ու երկրագործության զարգացումը խաների համար ունեն արդեն քաղաքական իմաստ ու հետևանքներ: Խաների՝ քաղաքական և սոցիալական նման ձգտումների կամ ցանկությունների իրականացման ամենալուրջ խոչընդոտը քոչվորական բնատնտեսության հատուկ համակարգն էր: Քոչվոր խաները ցեղային կառույցի ներսում ունեին սահմանափակ վերահսկողություն համակարգի տնտեսական բազայի նկատմամբ, որը, փոփոխական լինելով, ըստ էության, նաև անկայուն էր: Այդ պատճառով, խաների համար պարտադիր, որոշ դեպքերում՝ նաև բնազդով պայմանավորված, անհրաժեշտություն էր ընդարձակել քոչվորական արտադրության բազան եվ ժողովրդագրությունը, ներառելով նաև երկրագործությունն ու նստակյաց երկրագործներին:

Դիտարկումները վերաբերում են նաև Իլամին, որը լինելով Լուրիստանի մաս, բնականաբար, հարյուրամյակների ընթացքում ենթարկվել է այս ազդեցություններին, զարգանալով համակարգի տրմաբանության շրջանակներում:

Ընդհուպ մինչև 19-րդ դարը լուրերը և բախտիարները շարունակում էին հիմնականում մեկուսացված մնալ: Տոհմացեղային ավագանին շարունակում էր անվերահսկելի կերպով տնօրինել ցեղին պատկանող ընդհանուր հողերը, հարկեր էր հավաքում պետության համար և պատերազմների ժամանակ շահի պահանջով որոշակի թվով հեծյալներ էր տրամադրում անկանոն հեծելազորի համար: Այսինքն, վերարտադրվում էր այն վիճակը, որը մանրամասն արդեն դիտարկվեց:

Քոչվոր ցեղերի հնազանդությունը Իրանի շահերը փորձում էին ապահովել հիմնականում փորձված մեթոդներով, ինչպես օրինակ իրենց "պատվո պահակախմբում" խաների զավակներին, որոշ դեպքերում նաև առանձին խաների պահելով: Սա ևս բավարար երաշխիք չէր, ինչի մասին վկայում են լուրական ցեղերի ապստամբությունները շահական կառավարության դեմ ռուս-պարսկական պատեազմների ընթացքում[20]: Ռեզա շահի կառավարման շրջանում, ով համառ պայքար էր մղում խանական-ավատատիրական վերնախավի դեմ, սկսվեց

[20] Народы Передней Азии, էջ 266:

հարձակում հարավային ցեղերի ուղղությամբ: Լուրական և բախտիարական տարածքներ սկսեցին ուղարկվել զինվորական նահանգապետեր և կայազորեր: Հարկահանությունը վերցվեց իլիանների և ցեղերի առաջնորդների ձեռքից ու հանձնվեց պետական պաշտոնյաներին: 1928թ. կառավարությունը բռնի կերպով սկսեց նստակեցության անցկացնել լուրերին և բախտիարներին, միաժամանակ վերջիններիս պատկանող հողերը հայտարարելով պետական սեփականություն: Մի քանի հազար լուրական ընտանիքներ, իրենց սեփականությամբ, տեղաբաշխվեցին հատուկ ռազմական կայազորերի շրջակայքում: Լուրական ձմեռանոցների տեղերում սկսեցին կառուցել քաղաքներ և դրանք բնակեցնել լուրերով: Այսպես են հիմնվել Էյլեմ քաղաքը Փուշթեքոհի հովտի կենտրոնում և Շահաբադը Հորեմաբադի մոտակայքում: Դիմադրություն ցույց տվող ցեղերը բռնի կերպով տեղափոխվում էին Խորասանի և Թեհրանի նահանգներ: Նույն միջոցառումները իրականացվում էին նաև բախտիարների նկատմամբ: 1941թ., Ռեզա շահի՝ գահից հրաժարվելուց հետո, կենտրոնական կառավարության իշխանությունը տեղերում թուլացավ և բազմաթիվ բռնի նստակեցության բերված ցեղեր նորից վերադարձան իրենց նախկին կյանքին՝ այսինքն քոչվորության:

Լուրերի, բախտիարների, ինչպես նաև Իլամի հատկապես հյուսիսային շրջաններում բնակվող քոչվոր ու կիսաքոչվոր քրդերի հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: Բուծում են հիմնականում ոչխարներ, այծեր և ավանակներ, իսկ Փուշթեքոհում նաև ջորիներ: Խոշոր եղջերավոր անասուններն ու ձիերը տնտեսությունում նշանակալի տեղ չեն զբաղեցնում. այս կենդանիները պահում են հիմնականում նստակյացները: Կերային բազա ծառայում են հիմնականում մարգագետիններն ու արոտավայրերը:

Քոչվորների վերնախավը խնդրո առարկա շրջանում (20-րդ դարի առաջին կես) կենտրոնացրել էր նաև անասունների հիմնական մասը: Սա խաներին հնարավորություն էր տալիս իրագործել շարքային քոչվորների ըստ էության նահապետական-ավատատիրական շահագործում, որի հիմնական ձևն այս շրջանում անասունները ցեղի աղքատ անդամների արածեցնել պարտադրելն էր[21]:

Հիմնականում անասնապահական ավանդույթներով պայմանավորված, նույնիսկ նստակեցության անցած ցեղերի շրջանում երկրագործությունը դեռևս շարունակում է մնալ պարզունակ ու թույլ զարգացած: Արհեստները և տնայնագործությունը զարգացած են հիմնականում Լուրիստանի փոքր ու մանր քաղաքներում. Բուրուջիրդում տարածված է պղնձագործությունը, Հորեմաբադում՝ թաղիքի և բրդյա գործվածքների մշակումը, Դիզֆուլում՝ կողովագործությունը:

Անասնապահական զբաղմունքները պայմանավորել են նաև Իլամի բնակավայրային ու բնակարանային համալիրի առանձնահատկությունները: Քոչվոր բախտիարների և լուրերի համար որպես բնակարան ծառայում է վրանը, որը ծածկված է լինում այծի բրդից գործված կոշտ կտորից: Վրանի հիմքը կազմված է զուգահեռ երեք շարքով դրված բարակ ձողերից, որոնց վրա, վերջիններիս ուղղահայաց, դրվում են փոքր-ինչ ավելի հաստ ձողեր: Կենտրոնական շարքի

[21] Народы Передней Азии, էջ 267:

ցողերը ավելի բարձր են, քան ծայրի շարքերինը: Անկյունային մասերում կտորները ձգված և ամրացված են լինում ցածր բարձրության վրա խփված առանձին ձողերի:

Խանական վրանները գորգերով բաժանվում են տղամարդկանց և կանանց հարկաբաժինների, հաճախ առանձնացվում է նաև տարածք հյուրերի համար: Չնայած խաների մեծ մասը հիմնական ժամանակն անցկացնում է քաղաքների իրենց պալատներում, որոնք շքեղությամբ ու ճոխությամբ չէին զիջում Իրանի այլ ավատատերերի պալատներին:

Բնակարանի երկրորդ տիպը, որ տարածված է հիմնականում ձմեռային կայաններում, 6-9 մետր երկարություն և 4մ լայնություն ունեցող հյուղակն է կամ խրճիթը: Այն հիմնականում քարաշեն է, ընդ որում քարերը երբեմն միմյանց շաղախով չեն կապվում: Բացի դռնից, նման տներն այլ անցքեր չունեն: Տանիքը ծածկվում է եղեգնով, որը փոխում են ամեն տարի:

Նստակեցության անցած լուրերն ու բախտիարները բնակվում են արդեն կավաշեն տներում, որոնք ոչնչով չեն տարբերվում Իրանի այլ նստակյաց հանրությունների գյուղական տներից: Վրաններն ու հյուղակները սովորաբար դասավորվում էին խանական վրանի շուրջ:

Քոչվոր լուրերը և բախտիարները սնվում են կաթով, ոչխարի կամ այծի պանրով (քեշք), ինչպես նաև հալած ճարպով որը հայտնի է ողջ Իրանում: Հարուստ ընտանիքների շրջանում բավականին լայն տարածքում ունեն մսից կերակրատեսակները, ընդ որում օգտագործում են կրակի վրա եփած, շոգեխաշած միս:

ԳԼՈՒԽ 4

Սոցիալական մշակույթը. ընտանիքը, ընտանեկան հարաբերությունները, տոներն ու ծեսերը

Տոհմացեղային բաժանումը հնուց ի վեր պայմանավորել է տոհմերի ու ցեղերի առաջնորդների բարձր հեղինակությունն ու դիրքը: Լուրական և բախտիարական տոհմերի և ցեղերի գլուխ կանգնած էին խաները: Խանական իշխանությունը ժառանգական էր և անցնում էր հորից որդուն, հազվադեպ, որպես բացառություն՝ եղբորը: Խանն իր ցեղին ենթակա տարածքներում ուներ բացարձակ իշխանություն, հենվում էր իր զորքի վրա, որը բաժանվում է հետևակի (սերքարի) և հեծյալների (սուվարան): Թիկնազորի մեծությունը կախված է ցեղի մեջ մտնող տոհմերի մեծությունից:

Հայտնի քեթխուդաներից (մեծ ընտանիքների գլխավորներ) ձևավորվում էր տոհմի կամ ցեղի ավագ անդամների խորհուրդը, որի միջոցով և օգնությամբ խանը կառավարում էր ցեղակիցներին, ինչպես նաև բաժանում էր հողերը, արոտավայրերը և այսպես շարունակ:

Իլամի բնակչության ընտանեկան կենցաղը, հատկապես 19-րդ դարում -20-րդ դարի սկզբին, նահապետական բնույթ ուներ, չնայած այնքան ցայտուն արտահայտված չէ, որքան նստակյաց հարևանների՝ պարսիկների մոտ:

Լուրերի և բախտիարների շրջանում բազմակնությունը հազվադեպ հանդիպող երևույթ էր: Հարուստ և ազդեցիկ ավատատիրական ընտանիքի

ներկայացուցիչ կինը բարձր դիրք էր գրավում, երբեմն նույնիսկ մասնակցում էր տոհմի ժողովներին կամ հանդես գալիս որպես ցեղի առանջնորդ:

Ամուսնահարսանեկան ծեսեր և արարողություններ.

Ամուսնահարսանեկան ծիսաշարի ամենակարևոր գործողություններից մեկը տղայի և ընտանիքի համար հարմար հարսնացու ընտրելն է: Ընտրության չափանիշները տարբեր են, սակայն հաշվի են առնվում ոչ միայն ապագա կնոջ անձնական որակները, այլ նրա ընտանիքի դիրքը, հնարավորությունները և այլն:

"Ընտրությունից հետո" հաջորդ կարևոր քայլը այդ մասին աղջկա ծնողներին տեղյակ պահելն ու "բանակցություններ" սկսելն է: Համաձայնությունն ստանալուց հետո սկսվում են ամուսնության նախապատրաստության գործողությունները: Այս փուլում քննարկվում են նաև գլխագնի հետ կապված տարբեր հարցեր: Գլխագինը բավականին լայն տարածում ուներ ընդհուպ 20-րդ դ. կեսը, նաև՝ մեր օրերում: Գումարը, որը վճարում է փեսացուն հարսնացուի ծնողներին, այսպես կոչված մոր "կաթի գինը կամ կաթնագինը" կախված է հարսնացուի դասային պատկանելությունից, հնարավորություններից, աղջկա անձնական հատկություններից: Այն երբեմն կարող է հասնել մի քանի հազար թումանի և հազվադեպ է պակաս լինում 100-200 թումանից: Ամուսնական տարիքը աղջկա համար 12-ն է, տղայի համար՝ 15-18 տարեկանը:

Ամուսնական պայմանավորվածությունը խախտելը ենթարկվում է համընդհանուր քննադատության: Ի տարբերություն նախորդ տասնամյակների ու հարյուրամյակների, մեր օրերում որոշակի փոփոխությունների է ենթարկվել բուն հարսանեկան արարողությունը: Նախկին մեկ հիմնական սցենարի փոխարեն այսօր, կարելի է ասել, գոյություն ունի մի քանի սցենար կամ տարբերակ:

Հարսանիքը ենթադրում է մեծ թվով մարդկանց մասնակցությունը հատկապես վերջինիս նախապատրաստության աշխատանքներին. ընտանիքի անդամներ ու ազգականներ, տոհմի, երբեմն նաև ցեղի անդամներ, եթե հարսանիքը խանական ընտանիքում է: Երեք, երբեմն նաև ավել օրերի ընթացքում հարսի և փեսացուի ազգականները հավաքվում են աղջկա ծնողների վրանի մոտ: Այստեղ նրանք երաժշտության ուղեկցությամբ կատարում են ազգային Չափի պարը, որին մասնակցում են և կանայք և տղամարդիկ, ցուցադրում են ձիավարության հմտությունները, կրակում են, երգում սիրային և ռազմական տարբեր երգեր:

Բոլոր ներկաներին հյուրասիրություն է տրվում: Հարսանիքից հետո նորապսակները տեղափոխվում են ամուսնու ծնողների վրան, որտեղ նա արդեն լիովին կախված է դառնում սկեսրոջից՝ ընտանիքի կանանց գլխավորից:

Ամուսնալուծությունը մեծ ամոթ է համարվում և ամուսինը դրան, որպես կանոն, դիմում է միայն կնոջ անպտղության կամ հիվանդության դեպքում:

Իլամական մշակույթում որոշ սահմանափակումներ կան նաև այլ կեսափուլերի հետ կապված. դրանք վերաբերում են ծննդկանին, նորածնին, ընտանիքի անդամներին և այսպես շարունակ: Օրինակ, ծննդկանը, մինչև 40 օրը լրանալը, իրավունք չուներ նորածնի հետ անցնել գետով, կամ, եթե ստիպված էր դա անել, պարտավոր էր աղոթել ու մի քանի անգամ Աստծո անունը տալ: Միաժամանակ, ընդունված էր, որ ծննդկանը 40 օր տանը մենակ չպետք է մնար,

քանի որ ըստ տարածված պատկերացումների և ինքը և նորածին երեխան կարող էին ենթարկվել չար ուժերի ազեցություններին: Իլամում, ինչպես աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մոտ, բավականին լայն տարածում ունեին նաև դեռևս չծնված երեխայի սեռը որոշելու հետ կապված տարբեր պատկերացումները: Այսպես օրինակ, եթե երեխան մոր արգանդում շարժում էր աջ ոտքը, ուրեմն նաև տղա էր, ձախի դեպքում՝ աղջիկ:

Թաղման, սգո և հիշատակի արարողություններ. Ընտանիքի անդամի մահվան մասին տեղեկացվում են բոլոր ազգականները, իսկ խանի մահվան դեպքում՝ ողջ ցեղը: Հանգուցյալին լվացնում և թաղում են մուսուլմանական ծիսակարգին համաձայն: Հարուստ ընտանիքներում հիշատակի ճոխ արարողությունները տևում են բավականին երկար:

Հուղարկավորության արարողությունը Իլամի բոլոր շրջաններում շատ բազմամարդ է, հետևաբար պահանջում է նաև լուրջ ծախսեր, որոնք կարող են վեր լինել աղքատ ընտանիքների հնարավորություններից:

Մահվան մասին լուրն առնելուց հետո սկսվում են այցելությունները հանգուցյալի հարազատին: Ազգական կանայք այս այցելությունների ժամանակ կամ սև կամ մուգ կապույտ երանգի զգեստ են հագնում, իսկ այն կանայք, ում ազգականը չէ հանգուցյալը, կարող են այցելել նաև սովորական ամենօրյա զգեստներով: Հանգուցյալին հրաժեշտ են տալիս սովորաբար գլխաշորերը հանած, բաց գլխով:

Հիշատակի արարողությունները ևս բավականին բարդ են: Դրանք նշվում են մի քանի անգամ. մահվանից հետո առաջին երեք օրը, այնուհետև՝ 7-րդ, 40-րդ օրերը և մահվան մեկ տարին: 3-րդ և 7-րդ օրվա արարողությունները սկսվում են մզկիթներում, այնուհետև՝ շարունակվում երեկոյան կամ գիշերը արդեն հանգուցյալի տանը:

Ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում դեռևս պահպանվում են սոցիալական բարձ դիրք ու հեղինակություն ունեցող հանգուցյալների հիշատակի զանգվածային արարողությունները, որոնք կոչվում են “Չամար”: Չամար տերմինը, ըստ ընդունված ստուգաբանությունների, հիմքում ունի չամբարը (շրջան) և բառացի թարգմանությամբ նշանակում է արարողություն, որի ընթացքում մարդիկ շրջան կազմած, պտտվում են իրենց տեղում և իրենք իրենց կրկնում տարածված արտահայություններ: Այս արարողությունը, որպես կանոն, կատարվում է հերոսների, հանրահայտ պատմական դեմքերի հիշատակին: Մինչև Իրանական գերիշխանության վերջնական հաստատումը և հատկապես 1979թ. Իսլամական հեղափոխությունը, այս արարողությունը հազվադեպ էր: Մեր օրերում, սակայն, այն որոշակիորեն պաշտոնականացվել է. օրինակ, կատարվում է իմամ Հոմեյնիի հիշատակին, նահատակների հիշատակին և այլն: Հետաքրքիր է, որ տոնի վերազարթոնքի պայմաններում այն ընդլայնում է նաև իր շրջանակը: Կատարվում են ցեղային նշանավոր առաջնորդների հիշատակի տոներ: Չամար արարողություն կատարվում է, օրինակ, Մուհամմադ Օմիդի վալիի հիշատակին, ով Իլամի մեծագույն բանաստեղծներից մեկն է:

Իլամում, այստեղ բնակվող տարբեր, հատկապես շիա էթնիկ հանրությունների շրջանում լայն տարածում ունեն Իմամ Հոսեյնի հիշատակի ծեսերն ու արարողությունները: Դրանք սկսվում են Մոհարրամ ամսի առաջին օրն ու

շարունակվում մինչև 10-րդ օրը որպես ընդհանուր համայնքային (տոհմային կամ ցեղային) արարողություն: Իմամ Հոսեյնի նահատակության օրը, Մոհարրամի 10-ը հայտնի է նաև որպես Աշուրա:

Տոներ, հավատալիքների առանձին դրսևորումներ

Իլամում տարածված ու մեծ հանդիսավորությամբ նշվող տոների շարքում, բնականաբար, մեծ կարևորություն ունեն Նոր տարուն վերաբերող արարողությունները: Դրանցից մեկը կրակ վառելու սովորույթն է: Այն վառվում է Ամանորին նախորդող վերջին չորեքշաբթի օրը: Տարածված է այն պատկերացումը, որ կրակը սուրբ է և այն ջրով հանգցնելը մեղք է: Կարևոր է հատկապես այս սահմանափակումը պահել մայրամուտի ընթացքում:

Բացի կրակի պաշտամունքից, Իլամի ժողովուրդների մշակույթում մեծ տեղ են զբաղեցնում առանձին բույսերի ու կենդանիների պաշտամունքը, դրանց հետ կապված սնոտիապաշտությունները: Օրինակ, տարածված է այն պատկերացումը, ըստ որի նուռը սրբազան պտուղ է, որը եկել է դրախտից:

Բույսերի, կենդանիների պաշտամունքը ձևավորել է նաև տարբեր սնոտիապաշտություններ՝ վերջիններիս վնաս հացնելու հետ կապված: Իլամի էթնիկ հանրությունները՝ լուրերը, քրդերն ու այլ էթնիկ հանրությունները խուսափում են կենդանիներին վնաս հասցնելուց: Կատու սպանելն օրինակ, նրանց շրջանում մեծ մեղք է համարվում:

Լայն տարածում ունեն նաև հարստության և այն ավելացնելու հետ կապված տարբեր ծեսերը: Հավատալիքներից մեկի համաձայն, եթե բրնձի խրձերում կան միջատներ, ապա դա հարստության ավելացման նշան է: Հարստության ավելացմանը կարող են նպաստել նաև Աստծուն ուղղված շնորհակալությունները, քանի որ այդպես ապահովվում է բարեհաճ վերաբերմունք:

Եզրակացություններ

Իրանի կարևոր ու ազգագրական տեսանկյունից հետաքրքիր նահանգներից մեկի՝ Իլամի (Փոշտեքուհ) նահանգի տնտեսության, ընտանիքի, շեսերի ու սովորույթների ուսումնասիրությունն ամփոփելով, ներկայացնենք որոշ դիտարկումներ:

Առաջին դիտարկումը վերաբերում է հետազոտության բարդությանը: Մի կողմից նահանգի բազմէթնիկությունը, մյուս կողմից՝ էթնիկ հանրությունների միջև ակտիվ մշակութային փոխանակություններն ու կրոնական ու այլ բնույթի ընդհանրությունները հետազոտողին պարտադրում են անպայման ուշադրություն դարձնել ազգագրական “մանրուքներին”, մյուս կողմից՝ փորձել գտնել ընդհանուրը, համաիլամականը: Խոստովանենք, որ ատենախոսությունում ոչ միշտ ենք հաջողել լուծել այս երկու խնդիրը միաժամանակ:

Չնայած սրան, կարող ենք արձանագրել, որ Իլամը մի տարածաշրջան է, որտեղ դիտարկելի է մի կողմից պատմական, մյուս կողմից՝ մշակութային զարգացումների անընդհատությունը: Հիմնական տնտեսական համալիրները՝ հատկապես քոչվոր անասնապահությունը իր դասական դրսևորումներով, ձևավորվելով առնվազն մի քանի հազար տարրի առաջ, հիմնականում պահպանվելու հասել են մինչև 20-րդ դար:

Իլամը, աշխարհագրական դիրքով ու այլ գործոններով պայմանավորված, բազմաթիվ դեպքերում ոչ միայն կարողացել է պահպանել իր փաստացի կիսանկախ վիճակը, այլ նաև կարևոր գործոն դառնալ ներպետական կյանքում: Լուր աթաբեկների ու վալիների բազմադարյա կառավարումը ասվածի լավագույն վկայությունն է: Փոշթեքուհի վալիները իրենց կիսանկախ վիճակը կարողացան պահպանել նաև Ղաջարների կառավարման շրջանում: Եվ միայն Ռեզա շահի ակտիվ քաղաքական գործողությունների արդյունքում է, որ Լուրիստանը և Իլամը կորցրին ցեղային կառավարման սկզբունքն ու ներգրավվեցին ընդհանուր պետական քաղաքականության ուղեծիր: Չնայած սրան, կենտրոնական իշխանությունները չկարողացան մինչև վերջ լուծել ցեղային կառույցը վերափոխելու խնդիրը: Առաջին իսկ հնարավորության դեպքում նստակեցության բերված ցեղերը վերադառնում էին իրենց նախկին կենսակերպին:

Բավականին բարդ է նաև Իլամի տարբեր էթնիկ հանրությունների ցեղային կառույցի դիտարկումն ու վերլուծությունը: Սա պայմանավորված է առաջին հերթին այն իրողությամբ, որ և պարսիկ և օտարազգի հետազոտողները, նույնիսկ հայտնի արևելագետները, հաճախ հակասական մոտեցումներ ունեն առանձին ցեղերի ծագման, նկարագրի և այլ իրողությունների հետ կապված::

Իլամի էթնիկ հանրությունների տնտեսությունը, ինչպես ցույց տրվեց ատենախոսության համապատասխան գլխում, ներկայանում է որպես քոչվոր անասնապահության դասական մոդել, որը լավագույնս է հարմարեցված կլիմայական ու ռելիեֆային պայմաններին: Քոչվոր անասնապահությունը որոշ հետազոտողների կարծիքով, ծառայել կամ ծառայեցվել է հիմնականում ցեղային ավագանու, խաների, իլհանների շահերի սպասարկմանը: Չնայած սրան, վերջիններս աշխատել են հնարավորության դեպքում նվազագույնի հասցնել ցեղակիցների շահագործումը, կամ այն “փաթեթավորել” ազգակցության ու այլ սկզբունքների օգնությամբ:

Իլամում ընտանիքը ևս որոշակիորեն տարբերվել է այլ նահանգների ընտանիքներից: Նույն քոչվոր անասնապահությունը այստեղ ձևավորել է տղամարդկանց ու կանանց կայուն դերեր ու գործառույթներ, միաժամանակ, կնոջն օժտելով որոշ ազատություններով ու սոցիալական բարձր դիրքով, որ նա այլ տարածքներում չուներ:

Իլամում ամուսնահասանեկան ծեսերն ու արարողությունները բավականին կայուն են եղել հարյուրամյակների ընթացքում, ձևավորելով նաև կայուն ծիսաշար, որում իրենց ուրույն տեղն են ունեցել գլխագինը, հարսին ու փեսային տրվող նվերները, որոշակի արգելքներն ու սահմանափակումները: Նույնը վերաբերում է նաև թաղման ու հիշատակի ծեսերին ու արարողություններին:

Ամփոփելով, ևս մեկ անգամ կարող ենք փաստել, որ Իլամը եղել և մնում է Իրանի ուրույն պատմազգագրական շրջաններից մեկը:

Հարյուրամյակների ընթացքում, տարբեր գործոններով պայմանավորված, այստեղ բնակվող էթնիկ հանրությունները՝ լուրերը, քրդերը և ուրիշներ, կարողացել են պահպանել, զարգացնել ու վերարտադրել իրենց ուրույն մշակույթը, տոները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Հոդվածներ

1. Է. Յաղուբի, Իլամի Վալիների իշխանությունը (Փոշթեքուհ), Orientalia, պրակ12, Երևան, 2011, էջ 172-176:
2. Է. Յաղուբի, Փոշթեքուհի հասարակարգը Վալիների իշխանության շրջանում, Orientalia, պրակ13, Երևան 2011, էջ198-200:
3. E. Yaghobi, E. Mirzahosseini, The role and position of ethnics in politics: In view of Islam and Islamic scholars, Life science journal 10(1), 2013,1561-1570.
4. E. Yaghobi, Valigari and Poshtkooh Valian in Ilam, Orientalia, պրակ16, Երևան, 2015, էջ 84-99
5. I. Yaghobi, Political conditions of Satraps of west of Iran (Poshtkooh) during Qajar regimen, Historical research letter, vol. 30, 2016, 7-9.
6. E. Yaghobi, Elham Hemmati, The history of Vali in west of Iran, Historical research letter, vol. 33, 2016, 41-45.
7. E. Yaghobi, The effect of Valies on people of west of Iran during Qajar government, Historical research letter, vol. 41, 2017, 18-22.

Գրքեր

1. ابراهیم یعقوبی،تاریخ والیان پشتکوه (ایلام)، ایلام،1386، 224 ص.

Է. Յաղուբի, Փոշթեքուհի Վալիների պատմությունը, Իլամ, 2006, 224 էջ:

2. ابراهیم یعقوبی،والیان پشتکوه در دوره قاجار، ایلام،1394، 120 ص.

Է. Յաղուբի, Փոշթեքուհի Վալիները Ղաջարական ժամանակաշրջանում, Իլամ, 2015, 120էջ:

3. ابراهیم یعقوبی،ایلامو نقش والیان در مرزداری (در دوره قاجار)، ایلام،1394، 150 ص.

Է. Յաղուբի, Իլամը և Վալիների դերը սահմանապահության մեջ (Ղաջարական ժամանակաշրջանում), Իլամ, 2015, 150էջ:

Ягуби Эбрахим.

Быт, семейная ритуальная обрядность и праздники иламцев.

Иранское нагорье является важнейшим цивилизационным ареалом, развитие которого обусловлено также многообразием языков и культур. Илам (Поштекух), в свою очередь, считается одним из самых интересных ареалов Ирана в этнографическом плане. Илам, в широком контексте загросский ареал, интересны в первую очередь для исследования взаимоотношений трех групп: оседлых земледельцев, урбанизированных жителей городских центров и кочевников. Культурный и этнический облик Илама обусловлены также политической историей. Горный рельеф, другие факторы стали причиной того, что в течении почти семи веком, под правлением атабеков и валиев Илам смог сохранить свое полунезависимое состояние. Такая ситуация очень важна в первую очередь для этнографа, так-как позволяет путем сопоставления первоисточников и этнографического материала пронализиривать повседневность, повседневную жизнь, ценностные системы, межгрупповые отношения, праздничную обрядность, поминальный ритуал, языковый и этнокультурный облик в целом.

Основная цель диссертационной работы этнографическое исследование экономических систем, семейного быта, праздников и ритуалов иламцев, выявление в них локального-иламского, а также общеиранского. Хронологические рамки работы включают начало правления Каджарской династии (1795г.) до правления династии Пехлевидов (1925г.). Однако, при исследовании в первую очередь специфики племенной структуры, а также семьи и внутрисемейных отношений проанализирован также более ранний и поздний материал.

В диссертации выделены 4 основные задачи.

Первое: представить географическую, историческую, этноязыковую характеристику Илама (Поштекух).

Вторая задача наиболее сложная, так-как касается проблем структуры и основной характеристики племен и племенных союзов.

Третья задача- рассмотрение экономики-как ситемы, этнических общностей Илама.

И отдельной задачей является анализ социальной культуы, так-как отдельные составляющие этой культуры прошли долгий эволюционный путь развития.

Впервые, применением этнологической методологии и методов полевого исследования семья, племенная структура, социальная культура иламцев анализируются в процессе исторического развития и социокультурных трансформаций. Для нас важно в первую очередь системное рассмотрение трех составляющих экономики в целом, так-как, как показано в разных главах диссертации, кочевники, урбанизированные группы и земледельцы в течение веков сформировали и с большим успеховм практиковали своебразную систему взаимоотношений.

Методологическую базу диссертационной работы составили полевые этнографические исследования, организованные во многих населенных пунктах Илама. Полевой материал был собран с помощью заранее оформленного и согласованного с научным руководителем вопросника. Это позволило хотя бы частично восполнить тот пробел, который существует в области этнографического исследования Илама. Была проделана также большая работа в архивах и библиотеках: Национальный архив Ирана, Архивный центр Тегеранского Университета, Архивный центр Исламской революции и т. д.

Что касается источниковедческой базы диссертации, то тут ситуация двоякая. Археологически Илам исследован довольно таки активно и профессионально. Это касается в первую очередь известной Луристанской бронзы. Источники последующих столетий более ограничены и скудны. Сравнительно богатый и полезный материал содержат источники 18-19-ого веков и в первую очередь заметки посетивших Илам путешественников.

Основная этнографическая литература об Иламе была создана в 19-20-ом вв. На персидкосм, русском, английском и других языках. В работах А. Саки, З. Сараи, К. Али Резаи и других авторов есть богатый этнографический материал, позволяющий всесторонне проанализировать все культурное многообразие региона. В ходе выполнения диссертационной работы мы, к сожалению с помощью переводов, познакомились с работами известных русских и советских востоковедов-иранистов. В

переводе была использована также этнографическая литература на русском. Из англоязычных источников хотелы бы выделить монографию Мортенсена, в которой рассматриваются многие проблемы лурских кочевых племен.

Диссертация сможет стать основой для дальнейших этнографических исследований Илама, а также системы кочевой культуры в целом и кочевников Западного Ирана в частности.

Диссертация состоит из Введения, 4 глав с параграфами, Заключения, Списка источников и Литературы и Приложения.

Yaghobi Ebrahim
Everyday life, family rituals and holidays of Ilam people

Iranian plateau is an important areal of civilization contributing the linguistic and cultural diversification of the region.

Ilam (Poshtekhuh) is one of the ethnographic regions of Iran. Ilam, the wider Zagros areal, is interesting for the research perspective of sedentary-agricultural, urban based and nomadic groups.

The political history is also shape the nature of Ilam.

Due to mountainous location, the lack of accessibility, Ilam maintained its semi-independent status for more than seven centuries of governance lur atabeks and valies.

The situation is worth to ethnographic research from the perspectives of broad range of topics such as everyday life, values, festivals, funerals, wedding ceremonies, linguistic characteristics etc.

The research aimed at reveling the economic systems, rituals and holidays of Ilam people, trying to stress the local Ilamian along with pan Iranian developments from the point of historical and political situations.

The research includes the period from the establishment of Khajar dynasty (1795) up to Pehlevi dynasty (1925).

4 Main questions were elaborated for the research:

- The geographical, historical and etnic-linguistic description of Ilam (Poshtekhuh) province.
- The description of tribal unions of the Province and their structures.
- The description of economies of ethnic groups and tribal unions of the Province
- Research of the social life and communication of the Province.

It is the first attempt to represent the ethnographic aspects of the family, tribes, social culture/structure of Ilam people in the historical dimensions.

The methodological approaches.

The research is driven by filed ethnographic methods. The ethnographic field work was conducted in urban and rural settlements of Ilam province. Archival and bibliographic research in Ilam and Armenia has been conducted in Iran's national archive, Archival center of Tehran University, Archival center of Islamic Revolution etc.

Ilam is well-researched from archeological perspectives, especially Luristan's bronze age monuments.

Not much researches has been carried out for the next centuries. The more complex sources are for 18-19cc., particularly the notes of travelers to Ilam and Luristan. The main sources on Ilam history are in Iranian, Russian and other languages dealing with the topics of transformations of nomadism

The research is consisting of the introduction, 4 parts with sub chapters, results, bibliography and the annex.